զեցիսն ըստ իւրաքանչիւր կարողութեան՝ Ռեճ զու-
ռուչէն մինչև ի Ժ-ն և Ե զուռուչն էառ յամենեցունց.
մինչ ի ԻԵՌ զուռուչ իջեցոյց զայնքան պարտսն, խրատ
և քարոզ ասելով, աղաչելով պաղատելով ժողովուրդ-
դեանն, և զմնացեալն ամենայն եկեղեցոյ ըստ չափոյ
քաշխեաց, զի եկած ախարէթէն երթեալ վճարեսցեն։

Եւ յետ բանից այսոցիկ ըսկսեալ զկարգ եկեղե-
ցեացն որոնել և զայլ ազգիս զանհամութիւն նկատել։
Քանզի նամակ և թուղթ ուղարկեաց յեկեղեցիսն՝ թէ
ա) Ով ոք իրիցանց ի յատենի սաղմոսերգութեանց կամ
ի կարգեալ ժամակարգութենէ հեղգեալ ծուլասցի՝ ա-
նագան յամր գալով կամ զրաւելով, ինքն քահանայն
լուծցի և զամենայն քահանայական զհասկն նորա ա-
թոռակալն տէրունի վայելեսցէ։ Այսմ հրամանաց
մտերմաբար կատարողքն աւրհնեալք լիցին ի Քրիստոսէ։

բ) Դարձեալ պատուէր եւ հրաման եթէ Ով ոք
ի քահանայից՝ թէ զինչ պատճառի եւս՝ ի մէյխանէ
մտանէ, ինքն եւ իւրեան ծուխ լինող ժողովուրդն
նզովեալ եղիցին(*)։

գ) Եւ զերգող քնարացն և զխաղառքն, որ տա-
նէին ի հարսանիսն մեր ազգիս եւ զօրէնսն մեր ծի-
ծաղեալ ընդ խաղս արկանէին, քանզի հրեայ էին և
մահմետական. զայսոսիկ խափանեաց և ոչ այնուհետև
կարող էին տանելոյ զնոսա ի հարսանիսն։

դ) Եւ զայնոսիկ, որք կարգէին զդուստր և զոր-
դիսն, յետ ժամուն՝ մօտ կէս աւուրն արբեալ և զո-

(*) Լուս. Եւ թէ հանդիպեալ լինէր յերիցանց ոք հար-
կիւ զուլլուխի՝ էնկիչէրիքն զգենուին զկերպս իւրեանց,
որ զգենուին ի դէմ աղային ըստ օրինի իւրեանց, և բե-
ռէին առ վարդապետն՝ թէ Գտաք զսա ի մէյխանան, և նա
արգիլէր զնոսա յեկեղեցոյն . . . զորինչ կա . . . սեաղլուին
հա . . .